ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գևորգյան.

Ի պատասխան Ձեր 02.06.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում ծառերի ճյուղերի՝ լուսացույցերի, ճանապարհային նշանների և արագաչափ սարքերի տեսանելիությունը խոչընդոտելու վերաբերյալ «Սեքյուրիթի դրիմ» ՍՊ ընկերությունը դիմել էր Երևանի քաղաքապետարան՝ ներկայացնելով առավել պահանջվող վայրերում տեսախցիկների և ճանապարհային նշանների տեսանելիությունն ապահովելու նպատակով էտման աշխատանքներ իրականացնելու հասցեների ցանկը: Գրությունն ուղարկվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ: Արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՈԱԿ-ի և «Սեքյուրիթի դրիմ» ՍՊԸ-ի միջև, համաձայն որի՝ «Սեքյուրիթի դրիմ» ՍՊԸ-ն կտրամադրի տվյալներ Երևան քաղաքում նման խնդիրներ առկա հատվածների վերաբերյալ և ՀՈԱԿ-ը սեղմ ժամկետներում կվերացնի այն՝ ապահովելով վարորդների անվտանգ երթևեկությունը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Սեքյուրիթի դրիմ» ՍՊԸ-ի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի համագործակցությունը, առկա խոչընդոտների վերացման հարցում, կլինի շարունակական և հետևողական:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ